



# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

28 ապրիլի 2025 թվականի թիվ 44-Ա

ք. Երևան

### «ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**), ուսումնասիրելով 2025 թվականի ապրիլի 04-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 19 վարչական վարույթի նյութերը, **պարզեց**.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ **Օրենք**) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող «ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ **ցանցային օպերատոր**) կողմից իր 2024 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը մինչև 2025 թվականի ապրիլի 01-ը Հանձնաժողով չներկայացնելը:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2025 թվականի ապրիլի 04-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է թիվ 19 վարչական վարույթը:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2025 թվականի ապրիլի 04-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող է ներկայացնել իր պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում՝ 2025 թվականի ապրիլի 07-ին, ցանցային օպերատորը ներկայացրել է իր պարզաբանումը և կից՝ 2024 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը:

Ցանցային օպերատորն իր պարզաբանմամբ հայտնել է, որ շփոթել է տեղեկատվության ներկայացման վերջնաժամկետը ապրիլի 01-ի փոխարեն մայիսի 01-ը և հայցել Հանձնաժողովի ներողամտությունը:

### **Հանձնաժողովի հիմնավորումները (պարզաբանությունը) և եզրահանգումը.**

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Համաձայն **Օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի՝** սույն օրենքը Հայաստանի Հանրապետությունում տարածվում է տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների, օպերատորների, կարգավորող պետական մարմնի և հանրային տեսալսողական մեդիաձառայություն մատուցողի գործունեության կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող մարմնի վրա: Ուստի Օրենքով սահմանված նորմերի պահանջները պարտադիր են ուղրտում գործունեություն իրականացնող բոլոր տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների և օպերատորների վրա:

Տվյալ դեպքում ցանցային օպերատորը պարտավոր էր պահպանել **Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով** սահմանված պահանջները:

**Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.**

«Հեռարձակողները և օպերատորները պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 1-ը կարգավորող պետական մարմին ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:»:

Հանձնաժողովը 2025 թվականի մարտի 05-ի թիվ Ե/04/04.1/195-25 գրությամբ Հեռարձակողներին և ցանցային օպերատորներին տեղեկացրել է Օրենքի վերոնշյալ պահանջի մասին և առաջարկել Օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2024 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն, սակայն ցանցային օպերատորի կողմից սահմանված ժամկետում պահանջվող տեղեկությունը Հանձնաժողով չի ներկայացվել (Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 2020 թվականի օգոստոսի 07-ից սկսած, յուրաքանչյուր տարի Հանձնաժողովի կողմից գրություններով ցանցային օպերատորին տեղեկացվել է Օրենքի վերոնշյալ պահանջի մասին):

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և ներկայացրած փաստերը, որի արդյունքում հայտնի է դարձել, որ ցանցային օպերատորը Հանձնաժողովի կողմից 2025 թվականի ապրիլի 04-ի ծանուցումը ստանալուց հետո՝ 2025 թվականի ապրիլի 07-ին, Հանձնաժողով հասցեագրված գրությամբ է ներկայացրել իր 2024 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը՝ պատճառաբանելով, որ շփոթել է ապրիլի 1-ը մայիսի 1-ի հետ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքով Հեռարձակողների և օպերատորների համար սահմանված է պարտավորություն՝ յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 01-ը Հանձնաժողով ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն, սակայն ցանցային օպերատորի կողմից չի պահպանվել Օրենքի պահանջը, և վերջինս Օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով չի ներկայացրել իր 2024 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը՝ դրանով իսկ խախտելով **Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:**

Հանձնաժողովն արձանագրում է, որ ցանցային օպերատորը 2020 թվականի մայիսի 26-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ (լիցենզիայի սերիան, համարը՝ ԿՀ N 280, գործողության ժամկետը՝ 27.05.2020թ.- 27.05.2030թ., սփուման տարածքը՝ քաղաք Երևան) և պետք է հաշվի առնի, որ օրենքներով

հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ:

Ցանցային օպերատորը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում պարտավոր էր պահպանել **Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով** սահմանված պահանջը:

Ցանցային օպերատորի կողմից վարչական վարույթի հարուցումից հետո՝ 2025 թվականի ապրիլի 07-ին, 2024 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը Օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ Հանձնաժողով ներկայացնելը բավարար հիմք չէ ցանցային օպերատորի նկատմամբ օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն չկիրառելու համար:

Ավելին, նշված նորմը կրում է իմպերատիվ (պարտադիր) բնույթ, այսինքն՝ ցանցային օպերատորի կողմից ենթակա էր պարտադիր կատարման. **ցանցային օպերատորը պարտավոր է յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 1-ը կարգավորող պետական մարմին ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:**

Այսպիսով, ցանցային օպերատորի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է **Օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ մասի** հատկանիշներին:

**Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի** համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

**Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի** համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) **տուգանք.**
- 3) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

**Օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ մասը** սահմանում է.

«Կարգավորող պետական մարմին նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքի և չափի վերաբերյալ տեղեկություն չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով»:

**Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով** «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-

րդ կետը և **ղեկավարվելով** «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ մասով՝ **Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը**

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել **«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ մասով** սահմանված տույժը՝ տուգանելով 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

28 ապրիլի 2025 թ.  
ք. Երևան